Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ 2020թ.
մարտի 30-ի թիվ 47-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020թ.

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019 թվականի մարտի 14-ի թիվ 11/7, դեկտեմբերի 24-ի թիվ 28/8 և 2020 թվականի փետրվարի 4-ի թիվ 9-Ա որոշումներ:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ արդարադատության նախարարություն:
Հաշվեքննության առարկան	Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ֆինանսատնտեսական գործունեություն:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի հունիսի 30-ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2019 թվականի մայիսի 20-ից մինչև 2020 թվականի մարտի 30-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը:
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի ինններորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Գագիկ Ոսկանյանը:

I. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 9-րդ վարչությունը, հիմք ընդունելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի և 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթները, ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն է իրականացրել ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության 2018 թվականի և 2019 թվականի առաջին կիսամյակի ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ:

Ղեկավարության պատասխանատվությունը

ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ բյուջետային դասակարգումների և դրանց կիրառման ցուցումների համաձայն, ինչպես նաև ֆինանսատնտեսական գործունեությունը իրավական ակտերին, քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին համապատասխան իրականացնելու համար: Ծառայության ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը իր կարծիքով, թույլ է տալիս պատրաստել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Հաշվեքննողի պատասխանատվությունը

Հաշվեքննողների պատասխանատվությունն է անցկացված հաշվեքննության արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Հաշվեքննությունն անցկացվում է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության ստանդարտներով: Հաշվեքննության ընթացքում անհրաժեշտ է հետևել վարքագծի սկզբունքների պահանջներին, և հաշվեքննությունը պլանավորել ու իրականացնել այնպես, որպեսզի ձեռք բերվի ողջամիտ երաշխիք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից և անհամապատասխանություններից զերծ լինելու վերաբերյալ:

Հաշվեքննության ընթացքում կատարվում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության վերաբերյալ հաշվեքննության ապացույցի ձեռքբերում: Հաշվեքննության ընթացակարգերի ընտրությունը կախված է հաշվեքննողի դատողությունից, ներառյալ՝ խարդախության

կամ սխալի կամ անհամապատասխանության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման և ֆինանսատնտեսական գործունեության մեջ էական անհապատասխանությունների ռիսկերի գնահատումը:

Եզրահանգում

Հաշվեքննության ընթացքում ձեռք են բերվել և արձանագրվել են բավարար ապացույցներ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի բ. ենթակետի դրույթին համապատասխան ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքը հիմնավորելու համար:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքով Ծառայության 2018 թվականի և 2019 թվականի առաջին կիսամյակի հաշվետվություններն արժանահավատ են, էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել և հաշվեքննության ֆինանսական տեսակի առումով տրվում է դրական եզրահանգում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կարծիքով Ծառայության 2018 թվականի և 2019 թվականի առաջին կիսամյակի ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում Ծառայությունը թույլ է տվել էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ, դրանց հետևանքները համատարած չեն և հաշվեքննության համապատասխանության տեսակի առումով տրվում է ոչ լիարժեք եզրահանգում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ՝

Գագիկ Ոսկանյան

30 մարտի 2020 թվական

ՀՀ հաշվեքննիչ պալատ,
Բաղրամյան փող. 19, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

II. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Պետական բյուջեի ու Ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների օգտագործում

2018 թվականին Ծառայության պահպանման ծախսերի 85.0%-ը կազմել են հաստիքային 413 աշխատողների վարձատրության և պարգևատրման ծախսերը: Էներգետիկ, կապի և կումունալ ծառայությունների ծախսերը կազմել են պահպանման ծախսերի 7.6%-ը: Ծառայության կարիքների համար ապրանքների ձեռքբերման ծախսերը 2018 թվականին կազմել են 44,162.2 հազ. դրամ, կամ պահպանման ծախսերի 3.3%-ը:

2018 թվականին Ծառայության 13 ավտոմեքենաների շահագործման համար «տրանսպորտային նյութեր» հոդվածով բենզինի ձեռքբերման ծախսերը կազմել են 11,785.3 հազ. դրամ: Ծառայության մնացած 41 ավտոմեքենաները շահագործվել են արտաբյուջետային միջոցների հաշվին: 2018 թվականին Ծառայությունը «ՍիՓիԷս ՕԻԼ քորփորեյշն» ՍՊԸ հետ կնքել է թիվ ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 պայմանագիր՝ 6,300.0 հազ. դրամի 15000 լիտր ռեգուլյար տեսակի բենզին գնելու համար (մեկ լիտրը 420 դրամ) և «Մաքս Օիլ» ՍՊԸ հետ կնքել է թիվ ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-18/1-1 պայմանագիր՝ 5,485.7 հազ. դրամի 13721 լիտր ռեգուլյար տեսակի բենզին գնելու համար (մեկ լիտրը 399.8 դրամ):

2019 թվականի առաջին կիսամյակում Ծառայությունը «տրանսպորտային նյութեր» հոդվածով ծախսեր չի կատարել և ավտոմեքենաները շահագործվել են 2018 թվականի տարեվերջի 27780 լիտր բենզինի մնացորդի հաշվին:

2018 թվականին Ծառայության ծախսերը «գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածով կազմել են 32,136.9 հազ. դրամ: Ծառայությունը այդ միջոցների հաշվին մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված երեք կազմակերպություններից ձեռք է բերել 13,396.8 հազ. դրամի հագուստ (հանդերձանք), երեք մատակարար

կազմակերպություններից՝ 18,190.6 հազ. դրամի գրասենյակային նյութեր: Մատակարարումների ուշացումների համար Ծառայությունը հաշվարկել և պետական բյուջե է փոխանցել 549.5 հազ. դրամի տույժ:

Ծառայության դեբիտորական պարտքը 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 59,220.1 հազ. դրամ, 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 66,837.5 հազ. դրամ: 2019 թվականի առաջին կիսամյակում դեբիտորական պարտքը հիմնականում մարվել և մնացորդը կազմել է 7,149.4 հազ. դրամ: Այդ մնացորդից 1,589.8 հազ. դրամը հաշվեքննության ընդգրկող ժամանակաշրջան է փոխանցվել նախորդող տարիներից, իսկ Ծառայությունը բավարար միջոցներ չի ձեռնարկել իրավաբանական անձանց այդ դեբիտորական պարտքերը մարելու ուղղությամբ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Նախորդ տարիներից փոխանցվող դեբիտորական պարտքեր

Կազմակերպություն	Դեբիտորական պարտք (հազ. դրամ)
«Մարշալ Լենդ» ՍՊԸ	960.0
«Բյուրակն» ՍՊԸ	261.9
«Էսկո Կոնցեռն» ՓԲԸ	189.9
«Լեվ-Արտ» ՍՊԸ	178.0
Ընդամենը	1,589.8

2017 թվականին իրականացված վերահսկողության արդյունքում արձանագրվել էր, որ Ծառայությունը խախտել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կատարողական գործողությունների կատարման ծախսերի Ծառայության նյութական խրախուսման և կատարողական ծախսերի և համակարգի զարգացման բաղադրիչների հավասար հարաբերակցությունը: 2017 թվականի հոկտեմբերի 25-ին «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 7-րդ մասում կատարվել է փոփոխություն, որի արդյունքում բաղադրիչների հավասար հարաբերակցության պահանջը վերացել է, և 2018 ու 2019 թվականներին

արտաբյուջետային միջոցների ծախսերը կատարվել են հաստատված տարեկան նախահաշիվներին համապատասխան: 2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում Ծառայության աշխատողների վարձատրությունը և պարգևատրումները կազմել են արտաբյուջետային միջոցների ծախսերի համապատասխանաբար՝ 48.6%-ը և 62.3%-ը:

ՀՀ կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների օգտագործման կարգը հաստատելու մասին» 15.12.2005թ. թիվ 2275-Ն որոշման համաձայն՝ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայողների նյութական խրախուսման համար նախատեսված միջոցների 90%-ը բաշխվում է հարկադիր կատարման ծառայողների և ծառայությունում քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց միջև՝ նրանց ամսական դրամական բավարարմանը համամասնորեն, և վճարվում է յուրաքանչյուր ամիս, իսկ նյութական խրախուսման համար նախատեսված միջոցների 10%-ը կարող է տրամադրվել առանձին աշխատողների՝ որպես դրամական պարգևատրում՝ աշխատանքային բարձր արդյունավետության և բարդ ու ծավալուն կատարողական գործողությունների իրականացման համար: Նախորդ վերահսկողությամբ արձանագրվել էր, որ 2016 և 2017 թվականներին Ծառայությունը նյութական խրախուսման բաղադրիչից միջոցները ուղղել է պայմանագրային հիմունքներով աշխատող անձանց վարձատրությանը, որը չի համապատասխանում ՀՀ կառավարության 15.12.2005թ. թիվ 2275-Ն որոշմամբ հաստատված կարգին: Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում Ծառայությունը նույնպես խախտել է ՀՀ կառավարության 15.12.2005թ. թիվ 2275-Ն որոշմամբ հաստատված կարգը և համապատասխանաբար՝ 412,834.7 հազ. դրամ և 140,332.8 հազ. դրամ ուղղել է պայմանագրային հիմունքներով աշխատող ավելի քան 200 անձանց վարձատրությանը: Փաստորեն, 2018 թվականին և 2019 թվականի առաջին

կիսամյակում պակասել են հարկադիր կատարման ծառայողների ամսական դրամական բավարարմանը համամասնորեն տրամադրվող հավելավճարների և դրամական պարգևատրումների համար հատկացումները և կատարվել են արտաբյուջետային միջոցների օգտագործման կարգով չնախատեսված ծախսեր՝ պայմանագրային աշխատողներին աշխատավարձ: ՀՀ վարչապետի 2019 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 1780-Ա որոշումով Ծառայության հաստիքների առավելագույն թիվը՝ 413 փոխարինվել է 620 թվով և պայմանագրային աշխատողները փոխադրվել են բյուջետային հաստիքների, ու խնդիրը կարգավորվել է:

2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում Ծառայությունը «համակարգչային ծառայություններ» հոդվածով արտաբյուջետային միջոցների հաշվին ծախսել է համապատասխանաբար՝ 23,330.5 հազ. դրամ և 7,130.9 հազ. դրամ: Նախորդ վերահսկողության արդյունքներով Ծառայությանը ներկայացվել էր առաջարկություն՝ կատարողական գործողությունները արդյունավետ կատարելու նպատակով ձեռնարկել միջոցներ հարկային ծառայությունից պարտապան իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու ուղղությամբ: Այդ նպատակով Ծառայությունը 2018 և 2019 թվականներին «Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ հետ կնքել է ցանցային համակարգչային ծրագրային փաթեթների մշակման երեք պայմանագիր՝ 8,000.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով:

Ծառայությունը «գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածով 2018 թվականին ծախսել է 98,572.5 հազ. դրամ, 2019 թվականի առաջին կիսամյակում այդ հոդվածով ծախսեր չեն կատարվել:

Նախորդ վերահսկողության արդյունքներով արձանագրվել էր, որ Ծառայությունը 2017 թվականին գնված 11460 տուփ A4 ֆորմատի թուղթը մինչև 2018 թվականի մարտի 1-ը ի պահ էր հանձնել մատակարարին, քանի որ տարվա պահանջարկը ամբողջությամբ բավարարված էր, և բացի այդ, Ծառայության պահեստում տարեվերջին առկա էր 5895 տուփ թղթի մնացորդ: Ծառայությանը

առաջարկվել էր 2018 թվականի ծախսերի նախահաշվով A4 ֆորմատի թղթի պահանջարկը հաշվարկել՝ հաշվի առնելով 2017 թվականի տարեվերջի 17355 տուփ թղթի մնացորդը: Սակայն, չնայած թղթի զգալի մնացորդի առկայությունը, Ծառայությունը 2018 թվականի մարտի 16-ին «Սմարթլայն» ՍՊԸ հետ բյուջետային միջոցների հաշվին կնքել է թիվ ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ 18/3 պայմանագիր՝ 11163 տուփ A4 ֆորմատի թուղթ գնելու համար՝ 17,860.8 հազ. դրամ արժեքով (մեկ տուփը՝ 1600 դրամ), և 2018 թվականի սեպտեմբերի 16-ին նույն մատակարարի հետ կնքել է թիվ ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-18/Ա-32/1 պայմանագիր՝ արտաբյուջետային միջոցների հաշվին 42500 տուփ A4 ֆորմատի թուղթ գնելու համար 63,537.5 հազ. դրամ արժեքով (մեկ տուփը՝ 1495 դրամ): Փաստորեն, Ծառայությունը 2018 թվականին ձեռք է բերել 53663 տուփ A4 ֆորմատի թուղթ, և արդյունքում 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Ծառայության պահեստի մնացորդը կազմել է 28071 տուփ A4 ֆորմատի թուղթ, որը շուրջ երկու անգամ գերազանցում է 2019 թվականի 2-րդ կիսամյակի պահանջարկը, և այն անհրաժեշտ է հաշվի առնել թղթի հետագա գնումների պլանավորման ընթացքում:

2018 թվականին «Սմարթլայն» ՍՊԸ ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-18/Ա-32/1 պայմանագրով մատակարարել է 7,848.8 հազ. դրամի 5250 տուփ A4 ֆորմատի թուղթ: 2018 թվականի դեկտեմբերի 19-ին Ծառայությունը «Սմարթլայն» ՍՊԸ հետ կնքել է համաձայնագիր, որով թղթի մնացորդի մատակարարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2019 թվականի հունվարի 17-ը, իսկ պայմանագրով սահմանված գումարի մնացորդը՝ 55,688.8 հազ. դրամ, 2018 թվականի դեկտեմբերի 21-ին տրամադրել է «Սմարթլայն» ՍՊԸ-ին որպես կանխավճար: Սահմանված ժամկետում թուղթը մատակարարվել է և կանխավճարը մարվել է: Հաշվեքննությամբ պարզվել է, որ պայմանագրով սահմանված 2018 թվականի երրորդ եռամսյակում մատակարարման ենթակա 32,292.0 հազ. դրամի A4 ֆորմատի թղթից, մինչև 2018 թվականի դեկտեմբերի 19-ին համաձայնագիր կնքելը, «Սմարթլայն» ՍՊԸ-ն մատակարարել է 7,848.7 հազ. դրամի A4 ֆորմատի թուղթ, իսկ 24,443.3 հազ. դրամի թղթի

խմբաքանակի մատակարարման ուշացման համար Ծառայությունը չի հաշվարկել և չի գանձել 1,117.4 հազ. դրամի ուշացման օրերի տույժ:

Ծառայությունը 2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում հոգեբանական ծառայությունների գնման համար ծախսել է համապատասխանաբար՝ 4,295.0 հազ. դրամ և 1,800.0 հազ. դրամ: Նախորդ վերահսկողության արդյունքում արձանագրվել էր, որ Ծառայությունը չի սահմանել հոգեբանական ծառայության միավորի գին, չի վարել մատուցված հոգեբանական ծառայությունների քանակի հաշվառում և պայմանագրերով վճարումները կատարել է առանց հաշվարկային հիմքի:

2018 թվականի հունիսի 22-ին Ծառայությունը հոգեբանական փորձագիտական, դիագնոստիկ և խորհրդատվական ծառայություններ մատուցելու համար մեկ անձից գնման ընթացակարգով անհատ ձեռնարկատիրոջ հետ կնքել է պայմանագիր, որով յուրաքանչյուր ծառայության գին է սահմանվել 75.0 հազ. դրամ:

2019 թվականի համար Ծառայությունը հոգեբանական մասնագիտացված ծառայություններ ձեռք բերելու նպատակով հայտարարել է մրցույթ, որի շրջանակներում չորս մասնակիցներից ստացել է հայտեր: Մրցույթի հայտարարության համաձայն՝ գնման առարկա է հանդիսացել ծառայությունում հարուցված վարույթներով երեխաների տեսակցությունների կազմակերպման կամ երեխաների մեկ ծնողից մյուսին հանձնման կատարողական վարույթներով հոգեբանական մասնագիտացված ծառայությունների մատուցումը: Մասնակիցներից ստացվել են գնային առաջարկներ՝ անհատ ձեռնարկատերը առաջարկել է հոգեբանական մասնագիտացված ծառայությունների մատուցում՝ մեկ փորձաքննության համար (3-5 այց) Երևան քաղաքում 65,000.0 դրամ, իսկ ՀՀ մարզերում՝ 85,000.0 դրամ, «Մանդալա» հոգեբանական կենտրոն ՀԿ-ն առաջարկել է հոգեբան մասնագետի վճարում յուրաքանչյուր այցելության համար 6,500.0 դրամ, տրանսպորտային ծախսեր մարզերում (ըստ անհրաժեշտության)՝ 1,000.0–2,500.0 դրամ և խորհրդատվության ու անհրաժեշտ մեթոդական ռեսուրսներով ապահովում

(հոգեբանական տեխնիկաներ, մեթոդներ և այլն) յուրաքանչյուր մեկ վարույթի համար անկախ այցելությունների թվից՝ 8,000.0 դրամ, Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանն առաջարկել է 60,000.0 դրամ յուրաքանչյուր հանդիպման համար, ևս մեկ մասնակից ֆիզիկական անձը գնային առաջարկ չի ներկայացրել: Մրցութային հանձնաժողովը հաղթող է ճանաչել անհատ ձեռնարկատիրոջը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնակիցների կողմից ներկայացված տարաբնույթ հայտերը չեն համապատասխանում հայտարարությունով սահմանված գնման առարկայի բնութագրին և հնարավոր չէր որոշել նվազագույն գնային առաջարկը: Փաստորեն, մրցութային հանձանժողովը հնարավորություն չի ունեցել համեմատել և գնահատել մասնակիցների գնային առաջարկները, սակայն կայացրել է որոշում և հաղթող է ճանաչել նախորդ տարիներին այդ ծառայությունը մատուցած անհատ ձեռնարկատիրոջը:

Ծառայությունը «ներկայացուցչական ծախսեր» հոդվածով 2018 թվականին ծախսել է 21,631.8 հազ. դրամ, 2019 թվականի առաջին կիսամյակում՝ 1,718.հազ. դրամ:

Ծառայությունը 2018 թվականի մարտի 17-ին «Էյսի Ունիվերսալ» ՍՊԸ հետ կնքել է թիվ ԴԱՀԿ-ԷՈԽ/ՄԱԾՁԲ-18/1 ծառայությունների մատուցման գնման պայմանագիր՝ 51,949.4 հազ. դրամ արժեքով: Պայմանագրով նախատեսվել է 2018 թվականի մայիսի 4-ին և 5-ին կազմակերպել հյուրասիրություն և տոնական միջոցառումներ: 2018 թվականի մարտի 28-ին Ծառայությունը պայմանագրի գնի 50%-ը՝ 25,974.7 հազ. դրամ, որպես կանխավճար փոխանցել է ընկերությանը: Ծառայության կազմավորման 20-ամյա հոբելյանի առթիվ տոնական միջոցառումներ կազմակերպելու նպատակով ստեղծված հանձնաժողովի նիստերի արձանագրությունների համաձայն՝ 2018 թվականի մայիսի 4-ի և 5-ի տոնական միջոցառումներից բացի 2018 թվականի մայիսի 24-ից 26-ը նախատեսվում էր անցկացնել միջազգային գիտաժողով արտասահմանյան պատվիրակությունների մասնակցությամբ: Այնուհետև, հանձնաժողովի որոշմամբ ներքաղաքական

իրավիճակով պայմանավորված որոշ միջոցառումներ չեղարկվել են: Դրանով պայմանավորված Ծառայությունը «Էյսի Ունիվերսալ» ՍՊԸ հետ 2018 թվականի մայիսի 7-ին կնքել է համաձայնագիր, ըստ որի ընկերությունը իրականացրել է ֆիլմի պատրաստում, հրավիրատոմսերի, բեյջերի, պաստառների տպագրություն և 2018 թվականի մայիսի 5-ի հանդիսավոր միջոցառման կազմակերպում՝ ընդհամենը 12,105.9 հազ. դրամ արժեքով: Կանխավճարի մնացած 13,870.0 հազ. դրամը վերադարձվել է Ծառայության արտաբյուջետային հաշվին:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Ծառայությունը «Էյսի Ունիվերսալ» ՍՊԸ հետ պայմանգիրը կնքել է մեկ անձից գնման ընթացակարգով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և ՀՀ կառավարության՝ «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 23-րդ կետի 4-րդ ենթակետի 10-րդ պարբերությունը, որը վերաբերվում է արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությանը: Հաշվի առնելով, որ կնքված պայմանագրով նախատեսված չէ արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություն, մայիսի 4-ին և 5-ին նախատեսված տոնական միջոցառումների և հյուրասիրության կազմակերպումը պետք է իրականացվեր մրցութային եղանակով: Փաստորեն, Ծառայության և «Էյսի Ունիվերսալ» ՍՊԸ միջև առանց հիմնավորման կնքվել է մեկ անձից գնման ընթացակարգով պայմանագիր, որով նախատեսվել և, խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-ին մասի պահանջը՝ առանց կանխավճարի ապահովման, «Էյսի Ունիվերսալ» ՍՊԸ-ին տրամադրվել է 25,974.7 հազ. դրամ կանխավճար:

Բացի այդ, Ծառայության և «Էյսի Ունիվերսալ» ՍՊԸ միջև կնքված պայմանագրի և համաձայնագրի տեխնիկական բնութագրերում բացակայում են տվյալներ ֆիլմի պատրաստման արժեքի և տևողության, բեյջերի ու պաստառների գնի և քանակի, ինչպես նաև հանդիսավոր միջոցառման կազմակերպման արժեքի

վերաբերյալ, և հնարավոր չէ գնահատել գնման ծախսային արդյունավետությունը ու 12,105.9 հազ. դրամ ծախսի հիմնավորվածությունը:

2018 թվականին «շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածով Ծառայության ծախսը կազմել է 32,278.0 հազ. դրամ, 2019 թվականի առաջին կիսամյակում՝ այդ հոդվածով ծախսեր չեն կատարվել: 2018 թվականին նախատեսվել էր իրականացնել Ծառայության Արագածոտնի մարզի վարչական շենքի վերանորոգում՝ 36,611.1 հազ. դրամ արժեքով: Մրցույթին մասնակցած 22 կազմակերպություններից հաղթող է ճանաչվել 21,900.0 հազ. դրամ գնային առաջարկ ներկայացրած «Ագարակ» ԲԲԸ-ն, որի հետ կնքվել է 07.06.2018թ. թիվ ԴԱՀԿ-ԳՀԱՇՁԲ-18/Ա-02 պայմանագիրը: Աշխատանքները կատարվել են սահմանված ժամկետի ուշացումով, որի համար Ծառայությունը հաշվարկել է տույժ և պակաս է վճարել կապալառուին 154.9 հազ. դրամ:

2. Բյուջետային մուտքերի ապահովում

2.1 Ճանապարհային ոստիկանության պահանջով հարուցված կատարողական վարույթներ

Հաշվեքննությունն իրականացվել է Ծառայության կատարողական վարույթների էլեկտրոնային շտեմարանի տվյալների հիման վրա:

2018 թվականին Ճանապարհային ոստիկանության պահանջով Ծառայությունը հարուցել է 694518 կատարողական վարույթներ՝ 6,139,447.5 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով: Այդ վարույթներով առ հաշվեքննության պահը բռնագանձվել է 1,775,471.1 հազ. դրամ կամ բռնագանձման ենթակա գումարի 28.9%-ը:

2019 թվականի առաջին կիսամյակում Ճանապարհային ոստիկանության պահանջով Ծառայությունը հարուցել է 271706 կատարողական վարույթներ՝ 2,635,810.4 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով: Այդ վարույթներով

բռնագանձվել է 982,112.3 հազ. դրամ կամ բռնագանձման ենթակա գումարի 37.3%-ը:

Ճանապարհային ոստիկանության պահանջով Ծառայության կողմից 2018 թվականին հարուցված 2,940,780.6 հազ. դրամի 338738 կատարողական վարույթներ և 2019 թվականի առաջին կիսամյակում հարուցված 1,425,998.0 հազ. դրամի 146466 կատարողական վարույթներ հաշվեքննության պահի դրությամբ ավարտվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով՝ պարտապանը չունի գույք կամ եկամուտ, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել: Փաստորեն, 2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում Ճանապարհային ոստիկանության պահանջով հարուցված վարույթների շուրջ կեսը, համապատասխնաբար՝ 48.8%-ը և 53.9%-ը ավարտվել են պարտապանների գույք կամ եկամուտ չունենալու հիմքով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով ավարտված կատարողական վարույթները 2018 թվականին հարուցվել են 102219 ֆիզիկական անձանց նկատմամբ: Հաշվեքննությամբ պարզվել է, որ այդ անձանցից 114 անձանց նկատմամբ 2018 թվականի ընթացքում հարուցվել և օրենքի այդ հոդվածի հիմքով ավարտվել է 100-ից ավելի կատարողական վարույթներ: Փաստորեն, այդ անձինք, չունենալով գույք կամ եկամուտ, փաստացի շահագործել են ավտոմեքենա և կատարել են բազմաթիվ խախտումներ, որի համար նրանց նկատմամբ 2018 թվականին հարուցվել և ավարտվել են 158,735.8 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով 19275 վարույթներ:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ առանձին դեպքերում իրավաբանական անձանց պատկանող ավտոմեքենաների վրա արձանագրված բազմաթիվ խախտումների համար նշանակվել են տուգանքներ գույք կամ եկամուտ չունեցող ֆիզիկական անձանց նկատմամբ: Այսպես, 2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում տաքսի ծառայություն մատուցող «Խասուրո Գրուպ» ՓԲԸ

պատկանող ավտոմեքենաներով խախտումների համար 2753 վարչական ակտերով նշանակված 21,447.0 հազ. դրամի տուգանքները արձանագրվել են երեք ֆիզիկական անձի նկատմամբ, համապատասխանաբար՝ 10,843.5 հազ. դրամ, 8,160.0 հազ. դրամ և 2,443.5 հազ. դրամ: «Գրեյթ Մարինա» ՍՊԸ պատկանող ավտոմեքենաների 339 վարչական ակտերով 2,037.0 հազ. դրամի տուգանքները արձանագրվել են գույք կամ եկամուտ չունեցող մեկ ֆիզիկական անձի նկատմամբ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Կատարողական թերթով բռնագանձումն առաջին հերթին տարածվում է պարտապանի դրամական միջոցների վրա: Եթե պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար չկան անհրաժեշտ դրամական միջոցներ, ապա բռնագանձումը տարածվում է պարտապանին պատկանող այլ գույքի վրա, բացառությամբ այն գույքի, որի վրա օրենքով չի թույլատրվում բռնագանձում տարածել»: Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում մեկ ֆիզիկական անձի նկատմամբ հարուցված 8,739.3 հազ. դրամի 1100 կատարողական վարույթներ ավարտվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով այն դեպքում, երբ, ըստ Ճանապարհային ոստիկանության կողմից ներկայացված տեղեկանքների, այդ ֆիզիկական անձը ունեցել է սեփականության իրավունքով իրեն պատկանող 11 ավտոմեքենա, որոնցից ոչ մեկի վրա հարկադիր կատարողները բռնագանձում չեն տարածել:

Բացի այդ, հաշվեքննությամբ պարզվել է, որ 2018 թվականին հարուցված և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով ավարտված 64,006.0 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով 7205 վարույթներով 100-ից ավելի խախտում կատարած 34 պարտապան ֆիզիկական անձինք ևս ունեցել են մեկ կամ ավելի սեփականության իրավունքով իրենց պատկանող ավտոմեքենաներ, սակայն, հարկադիր

կատարողները պարտապանների ավտոմեքենաների վրա բռնագանձում չեն տարածել:

Հաշվեքննության ընթացքում արձանագրվել է, որ 2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում Ճանապարհային ոստիկանության պահանջով հարուցված համապատասխանաբար՝ 5,186.0 հազ. դրամի 465 կատարողական վարույթներ և 2,552.0 հազ. դրամի 194 կատարողական վարույթներ հարկադիր կատարողների որոշումներով ավարտվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-ին մասի՝ «Կատարողական վարույթը ավարտելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում» հիմքով: Փաստորեն, հարկադիր կատարողները հղում են կատարել որոշում կայացնելու իրենց վերապահված իրավասությանը, սակայն որոշումներում բացակայում է վարույթը ավարտելու հիմքը, և կայացրած այդ որոշումները հիմնավորված չեն:

2.2 Պետական եկամուտների կոմիտեի պահանջով հարուցված կատարողական վարույթներ

Ծառայության էլեկտրոնային շտեմարանի համաձայն՝ 2018 թվականին Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) պահանջով Ծառայությունը հարուցել է 72185 կատարողական վարույթներ՝ 7,849,259.5 հազ. դրամ, 2019 թվականի առաջին կիսամյակում՝ 23451 կատարողական վարույթներ՝ 9,709,452.3 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարներով (հավելվածներ 1 և 2):

Ըստ Ծառայության էլեկտրոնային շտեմարանի, հաշվի առնելով նաև բռնագանձված կատարողական ծախսերի փոխհատուցման գումարները, 2018 թվականին հարուցված վարույթներով 2020 թվականի փետրվարի 26-ի դրությամբ բռնագանձվել է 2,236,191.1 հազ. դրամ, կամ բռնագանձման ենթակա գումարի 26.9%-ը, 2019 թվականի առաջին կիսամյակում հարուցված վարույթներով՝ 3,771,560.0 հազ. դրամ, կամ բռնագանձման ենթակա գումարի 36.9%-ը:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2019 թվականի առաջին կիսամյակում հարուցված վարույթներով բռնագանձման ցուցանիշը արժանահավատ չէ: Այսպես,

ՊԵԿ պահանջով «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ից 736,567.6 հազ. դրամ բռնագանձելու համար Ծառայության կողմից հարուցված թիվ 05064006 կատարողական վարույթի շրջանակում ՊԵԿ-ը 2019 թվականի մայիսի 27-ի գրությամբ տեղեկացրել է Ծառայությանը, որ ՊՈԱԿ-ը չկատարված հարկային պարտավորություններ չունի: Սակայն, հարկադիր կատարողը կազմել է բռնագանձված գումարների բաշխման մասին տեղեկանք և 736,567.6 հազ. դրամը արտացոլվել է Ծառայության էլեկտրոնային շտեմարանում որպես բռնագանձված գումար, որի չափով շտեմարանում առկա է անհամապատասխանություն:

ՊԵԿ պահանջով 2018 թվականին հարուցված 242 կատարողական վարույթներ՝ 563,302.0 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով Ծառայության կողմից կարճվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի հիմքով՝ «անբողոքարկելի վարչական ակտի կատարման ընթացքում պարզվել է, որ առկա են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա հարկադիր կատարման սահմանափակումները»: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված սահմանափակումները՝ իրավական դրամական պահանջները ենթակա են հարկադիր կատարման օրինական ուժի մեջ մտած վճռով տրված կատարողական թերթի հիման վրա (մասնավորապես՝ եթե ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է 200.0 հազ. դրամը, իրավաբանական անձից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գույքի արժեքը) տարածվել են մինչև 2018 թվականի ապրիլի 1-ը ընդունված վարչական ակտերի հարկադիր կատարման վրա:

Պարզվել է, որ ֆիզիկական անձանց նկատմամբ 200.0 հազ. դրամը գերազանցող, ինչպես նաև իրավաբանական անձանց նկատմամբ կարճված

վարույթներով այդ վարչական ակտերը օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով տրված կատարողական թերթերով առ հաշվեքննության պահը ՊԵԿ կողմից չեն վերադարձվել Ծառայություն բռնագանձման համար: Փաստորեն, 563,302.0 հազ. դրամի այդ վարչական ակտերով պետական բյուջե բռնագանձում չի կատարվել, և հարցը ներկա դրությամբ գտնվում է ՊԵԿ իրավասությունների շրջանակում:

2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում ՊԵԿ պահանջով հարուցված համապատասխանաբար՝ 198,088.3 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով 4231 կատարողական վարույթներ և 176,470.5 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով 924 կատարողական վարույթներ կարճվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով՝ «պահանջատերը դիմում է ներկայացրել կատարողական թերթի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի հիման վրա ներկայացված կատարման վերաբերյալ գրության կամ կատարողական մակագրության թերթի պահանջների կամ կատարողական թերթի պահանջների կատարումից հրաժարվելու վերաբերյալ»: Համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերության՝ «Եթե կատարողական վարույթն ավարտվել է պահանջատիրոջ պահանջով կատարողական թերթը վերադարձնելու դեպքում կամ կատարողական վարույթը կարճվել կամ ավարտվել է պահանջատիրոջ դիմումի հիման վրա, ապա փաստացի կատարված կատարողական գործողությունների ծախսերը բռնագանձվում են պահանջատիրոջից: Բռնագանձվող գումարի չափը չի կարող պակաս լինել բռնագանձման ենթակա գումարի մեկ տոկոսից»: Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում ՊԵԿ պահանջով հարուցված և կարճված 374,558.8 հազ. դրամի վարույթներով Ծառայության կողմից չի բռնագանձվել այդ գումարի նվազագույնը մեկ տոկոսը կազմող 3,745.6 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում արձանագրվել է, որ 2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում ՊԵԿ պահանջով հարուցված համապատասխանաբար՝ 36,607.1 հազ. դրամի 53 կատարողական վարույթներ և 428.2 հազ. դրամի 3 կատարողական վարույթներ հարկադիր կատարողների որոշումներով ավարտվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-ին մասի՝ «Կատարողական վարույթը ավարտելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում» հիմքով: Փաստորեն, հարկադիր կատարողները հղում են կատարել որոշում կայացնելու իրենց վերապահված իրավասությանը, սակայն որոշումներում բացակայում է վարույթը ավարտելու հիմքը, և կայացրած այդ որոշումները հիմնավորված չեն:

Ծառայության կողմից 2020 թվականի փետրվարի 26-ի դրությամբ ավարտվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի (անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը), 2.1-րդ կետի (անհնարին է պարզել պարտապանի գույքի գտնվելու վայրը) և 3-րդ կետի (պարտապանը չունի գույք կամ եկամուտ) հիմքով 2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում ՊԵԿ պահանջով հարուցված համապատասխանաբար՝ 2,442,827.7 հազ. դրամի 34857 և 2,090,686.7 հազ. դրամի 10532 կատարողական վարույթներ:

Ընտրանքային կարգով ստուգվել են ՊԵԿ պահանջով պետական բյուջեի օգտին բռնագանձման ենթակա 10,000.0 հազ. դրամը գերազանցող ավարտված կատարողական վարույթները: Արձանագրվել է.

- ՊԵԿ պահանջով իրավաբանական անձից 22.03.2017թ. թիվ 03078724 կատարողական վարույթով ենթակա է բռնագանձել 15,655.0 հազ. դրամ: 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ ընկերությունը հաշվապահական հաշվեկշռում ունեցել է 107,612.2 հազ. դրամի հիմնական միջոցներ, այդ թվում՝ երեք ավտոմեքենա և երկու բուլդոզեր: Վարույթում առկա է պայմանագիր, ըստ որի այդ տրանսպորտային միջոցները հանդիսացել են գրավի առարկա: Գրավի պայմանագիրը չունի

նոտարական վավերացում, կամ պայմանագիրը անվավեր է: Վարույթում առկա Ճանապարհային ոստիկանության տեղեկանքի համաձայն այդ տրանսպորտային միջոցների վրա սահմանափակումներ կիրառված չեն: Հարկադիր կատարողը չի այցելել ընկերության հաշվառման հասցե, չի հայտնաբերել ընկերության հիմնական միջոցները, սակայն նշանակել է փորձաքննություն հիմնական միջոցների գնահատման համար: Հարկադիր կատարողը հայտարարել է ընկերության տնօրենի և հաշվապահի նկատմամբ հետախուզում, իսկ ընկերության գույքի նկատմամբ հետախուզում չի հայտարարել և 27.12.2017թ. վարույթը ավարտել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2.1-րդ հիմքով՝ անհնարին է պարզել պարտապանի գույքի գտնվելու վայրը: Հարկադիր կատարողի որոշմամբ 2019 թվականի նոյեմբերի 19-ին բռնագանձվել է բանկում արգելադրված ընկերությանը պատկանող 5.2 հազ. դրամը: Փաստորեն, հարկադիր կատարողը ընկերության գույքի հայտնաբերման ուղղությամբ կատարողական գործողությունները պատշաճ չի կատարել, որի արդյունքում ընկերությունից բռնագանձման ենթակա 15,655.0 հազ. դրամ գումարից պետական բյուջե մուտք է եղել 5.2 հազ. դրամ:

- ՊԵԿ պահանջով իրավաբանական անձից 22.02.2019թ. թիվ 04961897 կատարողական վարույթով ենթակա է բռնագանձել 38,862.6 հազ. դրամ: Ըստ հարկադիր կատարողի կողմից կատարված հարցումների՝ ընկերությունը 2017 թվականի տարեվերջին ունեցել է 496,760.1 հազ. դրամի ակտիվներ, այդ թվում՝ 51,892.8 հազ. դրամի հիմնական միջոցներ, 10,601.0 հազ. դրամի հումք, 172,352.6 հազ. դրամի անավարտ արտադրանք, 259,849.7 հազ. դրամի դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ: Վարույթի հարուցման պահին ընկերության կարգավիճակը եղել է գործող: Հարկադիր կատարողը չի այցելել ընկերության առաքման տեղափոխման վայր, հայտարարել է տնօրենի նկատմամբ հետախուզում: Գույքի նկատմամբ հարկադիր կատարողը հետախուզում չի հայտարարել, սակայն 26.06.2019թ. ավարտել է վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման

մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2.1-րդ հիմքով՝ անհնարին է պարզել պարտապանի գույքի գտնվելու վայրը: Փաստորեն, հարկադիր կատարողը չի իրականացրել կատարողական գործողություններ ընկերության ակտիվները հայտնաբերելու ուղղությամբ, որի արդյունքում 38,862.6 հազ. դրամից պետական բյուջե գումար մուտք չի եղել:

- ՊԵԿ պահանջով իրավաբանական անձից 01.03.2018թ. թիվ 04045271 կատարողական վարույթով ենթակա է բռնագանձել 99,344.7 հազ. դրամ: Վարույթում բացակայում է ընկերության հաշվապահական հաշվեկշիռը, առկա է միայն 2016 թվականի երկրորդ եռամսյակի ԱԱՀ հաշվարկի հաշվետվությունը, ըստ որի ընկերությունը այդ ժամանակահատվածում ստացել է 194,984.6 հազ. դրամի հասույթ: Հարկադիր կատարողը չի այցելել ընկերության գործունեության հասցե (պահածոների գործարան քաղաք Մասիսում) և 25.07.2019թ. ավարտել է վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2.1-րդ հիմքով՝ անհնարին է պարզել պարտապանի գույքի գտնվելու վայրը: Փաստորեն, հարկադիր կատարողը գույքը հայտնաբերելու ուղղությամբ կատարողական գործողությունները պատշաճ չի կատարել, որի արդյունքում 99,344.7 հազ. դրամից պետական բյուջե գումար մուտք չի եղել:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ՊԵԿ պահանջով 2018 թվականի և 2019 թվականի առաջին կիսամյակում հարուցված կատարողական վարույթներից համապատասխանաբար՝ 2,981,345.3 հազ. դրամի 36209 կատարողական վարույթներ և 4,171,859.8 հազ. դրամի 11163 կատարողական վարույթներ ավարտվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով սահմանված հիմքերով, որը կազմում է յուրաքանչյուր տարի ՊԵԿ պահանջով հարուցվող վարույթների շուրջ կեսը: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ավարտման հիմքերի վերացման դեպքերում հարկադիր կատարողը պահանջատիրոջ դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ որոշում է կայացնում ավարտված

կատարողական վարույթը վերսկսելու մասին: Հետևաբար, հարկադիր կատարողների կողմից ավարտված կատարողական վարույթներով պարտապան հանդիսացող իրավաբանական և ֆիզիկական անձանց եկամուտների վերաբերյալ ՊԵԿ-ից պարբերաբար տեղեկատվություն ստանալու միջոցով հնարավոր է հայտնաբերել ավարտման հիմքերի վերացումը, վերսկսել ավարտված կատարողական վարույթները և բարձրացնել պետական բյուջեի օգտին բռնագանձումների արդյունավետությունը:

2.3 Ծառայության արտաբյուջետային դեպոզիտային հաշիվների մնացորդներ

Ծառայության 12 գանձապետական արտաբյուջետային դեպոզիտային հաշիվների մնացորդը 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 1,774,190.8 հազ. դրամ, որից Երևանի բաժնի դեպոզիտային հաշվին՝ 1,253,537.9 հազ. դրամ: 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ այդ հաշիվներին մնացորդը կազմել է 1,802,680.9 հազ. դրամ, որից Երևանի բաժնի դեպոզիտային հաշվին՝ 1,340,197.2 հազ. դրամ:

Նախորդ վերահսկողության արդյունքում արձանագրվել էր, որ Ծառայության տարբեր բաժինների դեպոզիտային հաշիվներին առկա է չպարզված 149,806.4 հազ. դրամի մնացորդ, որի պահանջատերերը տարիներ շարունակ անհայտ են: Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ այդ գումարները ավելացել և կազմել են 185,516.7 հազ. դրամ, որը նպատակահարմար է փոխանցել պետական բյուջե՝ հետագայում պահանջատերերի ի հայտ գալու դեպքում պահանջը պետական բյուջեի միջոցների հաշվին բավարարելու պայմանով:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Երևանի բաժնի դեպոզիտային հաշվին առկա է տարբեր պետական մարմինների պահանջով բռնագանձված 44,533.0 հազ. դրամ, որը ենթակա է փոխանցման պետական բյուջե: Ընդ որում, այդ գումարից 28,618.4 հազ. դրամը բռնագանձվել է 2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում:

Բացի այդ, պահանջատերերի ցանկում առկա են պետական գրանցում ունեցող՝ տարիներ շարունակ հանրապետությունում գործող հայտնի իրավաբանական անձինք: Մասնավորապես, բռնագանձված 9,675.4 հազ. դրամի պահանջատեր են հանդիսանում առանձին առևտրային բանկերը, որոնց հետ Ծառայությունը իր ամենօրյա գործառույթների շրջանակներում փաստաթղթաշրջանառություն է իրականացնում էլեկտրոնային հատուկ կապուղու միջոցով:

Հաշվեքննվող օբյեկտի ղեկավարությունը ծանոթացել է հաշվեքննության արդյունքներով կազմված արձանագրություններին, ներկայացրել է բացատրություններ, (կցվում է) որը ընդունվել է մասնակի:

III. ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծառայությանը պետական բյուջեի «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանում» ծրագրով 2018 թվականին հատկացվել է 1,356,758.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 1,335,270.4 հազ. դրամ, 2019 թվականի առաջին կիսամյակում պետական բյուջեից հատկացված միջոցների դրամարկղային ծախսը կազմել է 500,198.5 հազ. դրամ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Ծառայության 2018 թվականի և 2019 թվականի առաջին կիսամյակի բյուջետային միջոցների ծախսերը

հազ. դրամ

Տնտեսագիտական դասակարգման հոդված	2018 թվական	2019 թվականի առաջին կիսամյակ
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	1,038,727.2	377,404.0
Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում	96,537.8	47,886.6
Էներգետիկ ծառայություններ	57,504.3	35,519.6
Կոմունալ ծառայություններ	3,007.6	1,091.9
Կապի ծառայություններ	41,140.1	20,799.4

Ապահովագրական ծախսեր	500.0	482.0
Գույքի և սարքավորումների վարձակալություն	7,846.5	3,240.2
Ներքին գործուղումներ	1,923.0	531.4
Համակարգչային ծառայություններ	6,600.0	-
Կառավարչական ծառայություններ	17,344.0	5,010.0
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	2,944.1	-
Գրասենյակային նյութեր և հագուստ	32,136.9	633.2
Տրանսպորտային նյութեր	11,785.3	-
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	240.0	-
Այլ նպաստներ բյուջեից	15,935.2	7,101.3
Պարտադիր վճարներ	1,098.5	499.4
Ընդամենը	**1,335,270.4**	**500,198.5**

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «կատարողական գործողությունները կատարվում են պետական բյուջեի և հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների հաշվին»: Նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցները ձևավորվում են կատարողական գործողությունների կատարման ծախսերի համար պարտապաններից բռնագանձված գումարների հաշվին:

2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում Ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի հաշվին մուտք է եղել համապատասխանաբար՝ 1,695,656.6 հազ. դրամ և 1,002,980.1 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ, 2019 թվականին Ծառայության արտաբյուջետային հաշվին մուտք է եղել 2,235,908.3 հազ. դրամ, կամ 2018 թվականի նկատմամբ արտաբյուջետային եկամուտները ավելացել են 31.9%-ով:

2018 թվականի և 2019 թվականի առաջին կիսամյակի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների հաշվին Ծառայության ծախսերը կազմել են համապատասխանաբար՝ 1,550,382.3 հազ. դրամ և 441,578.5 հազ. դրամ (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Ծառայության 2018 թվականի և 2019 թվականի առաջին կիսամյակի արտաբյուջետային միջոցների ծախսերը

հազ. դրամ

Տնտեսագիտական դասակարգման հոդված	2018 թվական	2019 թվականի առաջին կիսամյակ
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	412,834.7	140,332.8
Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	340,716.8	134,705.7
Էներգետիկ ծառայություններ	19,285.9	2,243.8
Կապի ծառայություններ	113,389.3	59,942.9
Ապահովագրական ծախսեր	1,355.0	1,076.3
Գույքի և սարքավորումների վարձակալություն	47,782.9	22,674.7
Արտագերատեսչական ծախսեր	25,916.0	12,958.0
Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	9,089.1	-
Այլ տրանսպորտային ծախսեր	27,720.0	-
Համակարգչային ծառայություններ	22,267.0	7,130.9
Տեղեկատվական ծառայություններ	495.0	-
Կառավարչական ծառայություններ	49,005.6	24,330.7
Ներկայացուցչական ծախսեր	21,631.8	1,718.5
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	20,268.2	1,737.0
Մասնագիտական ծառայություններ	4,295.0	1,800.0
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	32,278.0	-
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	14,468.4	3,000.0
Գրասենյակային նյութեր և հագուստ	98,572.5	-
Տրանսպորտային նյութեր	64,995.0	18,630.5
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	977.8	-
Հատուկ նպատակային այլ նյութեր	6,082.7	-
Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին	7,016.0	5,536.5
Պարտադիր վճարներ	1,130.1	461.8
Պետական հատվածի տարբեր մակարդակների կողմից միմյանց նկատմամբ կիրառվող տույժեր	142,000.0	3,149.0
Այլ ծախսեր	16,558.9	149.4
Վարչական սարքավորումներ	48,705.9	-
Նախագծահետազոտական ծախսեր	1,545.0	-
Ընդամենը	**1,550,382.4**	**441,578.5**

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ծառայության արտաբյուջետային հաշվի մնացորդը կազմել է 1,466,825.4 հազ. դրամ, որը 2020 թվականի հունվարի 31-ին տեղափոխվել է պետական բյուջե:

Առաջարկություններ

ՀՀ կառավարությանը՝

- հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթը՝ պետական բյուջեի օգտին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պահանջով բռնագանձման ենթակա գումարների մուտքերը ապահովելու նպատակով իրավական ակտերով հարկադիր կատարողների և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մարմինների համար նպատակահարմար է սահմանել հսկողության պարբերականություն՝ ավարտված կատարողական վարույթների ավարտման հիմքերի վերացումը հայտնաբերելու համար:

Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը՝

- ձեռնարկել միջոցներ Ծառայության դեբիտորական պարտքերը մարելու և պետական բյուջե փոխանցման ենթակա գումարների մուտքը ապահովելու ուղղությամբ,
- գնումները կատարել գնումների գործընթացը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան,
- բռնագանձման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով պատշաճ հսկողություն սահմանել պարտապանների գույքի հայտնաաբերման ուղղությամբ հարկադիր կատարողների կողմից կատարվող կատարողական գործողությունների նկատմամբ,
- բացառել առանց հիմնավորման կատարողական վարույթները ավարտելու դեպքերը,
- քննարկել հնարավորությունը Ծառայության դեպոզիտային հաշիվներում առկա չպարզված գումարները փոխանցել պետական բյուջե՝ հետագայում

պահանջատերերի ի հայտ գալու դեպքում դրանց պահանջը պետական բյուջեի միջոցների հաշվին բավարարելու պայմանով:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացության վերաբերյալ այլ գրավոր տեղեկատվություն:

Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության բացատրությունները

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №1

ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահավող ծառայության պետական բյուջեի ու նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների օգտագործման վերաբերյալ

Արտաբյուջետային միջոցների օգտագործում

<u>Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված է.</u> Նախորդ վերահսկողության արդյունքում արձանագրվել էր, որ Ծառայությունը խախտել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կատարողական գործողությունների կատարման ծախսերի Ծառայության նյութական խրախուսման և կատարողական ծախսերի և համակարգի զարգացման բաղադրիչների հավասար հարաբերակցությունը: 2017 թվականի հոկտեմբերի 25-ին «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 7-րդ մասում կատարվել է փոփոխություն, որի արդյունքում բաղադրիչների հավասար հարաբերակցության պահանջը վերացել է, և 2018 ու 2019 թվականներին արտաբյուջետային միջոցների ծախսերը կատարվել են հաստատված տարեկան նախահաշիվներին համապատասխան: 2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում Ծառայության աշխատողների վարձատրությունը և պարգևատրումները կազմել են արտաբյուջետային միջոցների ծախսերի համապատասխանաբար՝ 48.6%-ը և 62.3%-ը:

ՀՀ կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների օգտագործման կարգը հաստատելու մասին» 15.12.2005թ. թիվ 2275-Ն որոշման համաձայն՝ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայողների նյութական խրախուսման համար նախատեսված միջոցների 90%-ը բաշխվում է հարկադիր կատարման ծառայողների և ծառայությունում քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց միջև՝ նրանց ամսական դրամական բավարարմանը համամասնորեն, և վճարվում է յուրաքանչյուր ամիս, իսկ նյութական խրախուսման համար նախատեսված միջոցների 10%-ը կարող է տրամադրվել առանձին աշխատողների՝ որպես դրամական պարգևատրում՝ աշխատանքային բարձր արդյունավետության և բարդ ու ծավալուն կատարողական գործողությունների իրականացման համար:

<u>Հարկադիր կատարումն ապահովող ծառայության բացատրությունը.</u> ՀՀ վարչապետի 2019 թվականի նոյեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի

№ 706-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» № 1780-Ա որոշումով Ծառայության հաստիքների առավելագույն թիվը՝ 413 փոխարինվել է 620 թվով և պայմանագրային աշխատողները փոխադրվել են բյուջետային հաստիքների, ու խնդիրը կարգավորվել է:

<u>Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված է.</u> Նախորդ վերահսկողությամբ արձանագրվել էր, որ 2016 և 2017 թվականներին Ծառայությունը նյութական խրախուսման բաղադրիչից միջոցները ուղղել է պայմանագրային հիմունքներով աշխատող անձանց վարձատրությանը, որը չի համապատասխանում ՀՀ կառավարության 15.12.2005թ. թիվ 2275-Ն որոշմամբ հաստատված կարգին: Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում Ծառայությունը նույնպես խախտել է ՀՀ կառավարության 15.12.2005թ. թիվ 2275-Ն որոշմամբ հաստատված կարգը և համապատասխանաբար՝ 412,834.7 հազ. դրամ և 140,332.8 հազ. դրամ ուղղել է պայմանագրային հիմունքներով աշխատող ավելի քան 200 անձանց վարձատրությանը: Արդյունքում, 2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում այդ գումարների չափով պակասել են հարկադիր կատարման ծառայողների ամսական դրամական բավարարմանը համամասնորեն տրամադրվող հավելավճարները և դրամական պարգևատրումները:

<u>Հարկադիր կատարումն ապահովող ծառայության բացատրությունը</u>. «ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդ» արտաբյուջետային ծրագրի միջոցների ծախսման 2018 թվականի նախահաշիվը հաստատելու, Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի № 1717-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 15-ի № 136-Ն որոշման համաձայն և «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» 4111 տնտեսագիտական դասակարգման հոդվածով 2018 և 2019թթ. հատկացվել է համապատասխանաբար 412,834. 7 հազ. ՀՀ դրամ և 386,151. 8 հազ. ՀՀ դրամ՝ այդ թվում՝ 180,000. 0 հազ. ՀՀ դրամ առաջին կիսմյակում, իսկ «Պարգևատևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» 4112 տնտեսագիտական հոդվածով՝ 340,716. 8 հազ. ՀՀ դրամ և 336,006. 0 հազ.՝ այդ թվում առաջին կիսամյակում՝ 168,003. 0 հազ. դրամ:

Հաշվի առնելով Ծառայությունում հարուցվող կատարողական վարույթների քանակի աճի տեմպերը (2010 թվականին հարուցվել է **83.282** վարույթ, 2011 թ.՝ **91.577**, 2012թ.՝ **105.524**, 2013թ.՝ **123.201**, 2014թ.՝ **480.074**, 2015թ.՝ **893.222**, 2016թ.՝ **<u>1.224.417,</u>** 2017թ. 1.545.810) և հաստիքների թվաքանակի

ավելացման հնարավորության բացակայությունը՝ Ծառայությունը իր բնականոն աշխատանքը կազմակերպելու անհրաժեշտությամբ պայմանավորված պայմանագրային հիմունքներով աշխատանքի է ընդունել շուրջ 200 աշխատակիցների և նշված միջոցները ուղղել է այդ անձանց վարձատրությանը: Վերջիններիս վարձատրությունը կատարվել է նախահաշվով հաստատված «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» 4111 տնտեսագիտական դասակարգման հոդվածով:

Հարկադիր կատարումն ապահովող ծատայության պայմանագրային աշխատողների վարձատրությունը կատարվել է «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» 4111 տնտեսագիտական դասակարգման հոդվածով: Հետևաբար, պայմանագրային աշխատողների վարձատրությունը չի ազդել հարկադիր կատարողների և ծառայությունում քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բաշխման ենթակա ամսական գումարների նվազմանը:

<u>Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված է.</u> Նախորդ վերահսկողության արդյունքներով արձանագրվել էր, որ Ծառայությունը 2017 թվականին գնված 11460 տուփ A4 ֆորմատի թուղթը մինչև 2018 թվականի մարտի 1-ը ի պահ էր հանձնել մատակարարին, քանի որ տարվա պահանջարկը ամբողջությամբ բավարարված էր, և բացի այդ, Ծառայության պահեստում տարեվերջին առկա էր 5895 տուփ թղթի մնացորդ: Ծառայությանը առաջարկվել էր 2018 թվականի ծախսերի նախահաշվով A4 ֆորմատի թղթի պահանջարկը հաշվարկել՝ հաշվի առնելով 2017 թվականի տարեվերջի 17355 տուփ թղթի մնացորդը: Սակայն, չնայած թղթի զգալի մնացորդի առկայությունը, Ծառայությունը 2018 թվականի մարտի 16-ին Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ բյուջետային միջոցների հաշվին կնքել է թիվ ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ 18/3 պայմանագիր՝ 11163 տուփ A4 ֆորմատի թուղթ գնելու համար՝ 17,860.8 հազ. դրամ արժեքով (մեկ տուփը՝ 1600 դրամ), և 2018 թվականի սեպտեմբերի 16-ին նույն մատակարարի հետ կնքել է թիվ ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-18/Ա-32/1 պայմանագիր՝ արտաբյուջետային միջոցների հաշվին 42500 տուփ A4 ֆորմատի թուղթ գնելու համար 63,537.5 հազ. դրամ արժեքով (մեկ տուփը՝ 1495 դրամ): Փաստորեն, Ծառայությունը 2018 թվականին ձեռք է բերել 53663 տուփ A4 ֆորմատի թուղթ, և արդյունքում 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Ծառայության պահեստի մնացորդը կազմել է 28071 տուփ A4 ֆորմատի թուղթ:

2018 թվականին Ընկերությունը ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-18/Ա-32/1 պայմանագրով մատակարարել է 7,848.8 հազ. դրամի 5250 տուփ A4 ֆորմատի թուղթ: 2018 թվականի դեկտեմբերի 19-ին Ծառայությունը Ընկերության հետ կնքել է համաձայնագիր, որով թղթի մնացորդի մատակարարման ժամկետը երկարաձգվել է մինչև 2019 թվականի հունվարի 17-ը, իսկ պայմանագրով սահմանված գումարի մնացորդը՝ 55,688.8 հազ. դրամ, 2018 թվականի դեկտեմբերի 21-ին տրամադրել է Ընկերությանը որպես կանխավճար: Սահմանված ժամկետում թուղթը մատակարարվել է և

կանխավճարը մարվել է: Հաշվեքննությամբ պարզվել է, որ պայմանագրով սահմանված 2018 թվականի երրորդ եռամսյակում մատակարարման ենթակա 32,292.0 հազ. դրամի A4 ֆորմատի թղթից, մինչև 2018 թվականի դեկտեմբերի 19-ին համաձայնագիր կնքելը, Ընկերությունը մատակարարել է 7,848.7 հազ. դրամի A4 ֆորմատի թուղթ, իսկ 24,443.3 հազ. դրամի թղթի խմբաքանակի մատակարարման ուշացման համար Ծառայությունը չի հաշվարկել և չի գանձել 1,117.4 հազ. դրամի ուշացման օրերի տույժ, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե:

<u>Հարկադիր կատարումն ապահովող ծառայության բացատրությունը.</u> 2018 թվականին Ծառայությունը արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացված գնման ընթացակարգի շրջանակներում կնքել է ԴԾԻԳ-ԳՀԱՊՁԲ-18Ա/32/1 ծածկագրով պայմանագիր Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ, որով նախատեսվում էր ձեռք բերել A4 ֆորմատի թուղթ՝ 1 կիլոգրամը 598 ՀՀ դրամ արժեքով: Նշված պայմանագիրը կնքվել է 06.09.2018 թվականին և համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 18-րդ ենթակետի՝ պայմանագրի 8. 1 կետով սահմանվել է, որ «պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը», այսինքն պայմանագրի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից դրական եզրակացության ստանալը: Պայմանագիրը լիազոր մարմնի կողմից հաշվառվել է (ստացել է դրական եզրակացություն) 11.09.2018 թվականին: Պայմանագրի հավելված 1-ով «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով նախատեսվել է, որ պայմանագիրը գործում է մինչև 20.12.2018 թվականը, ընդ որում 1-ին խմբաքանակի վերջնաժամկետը ոչ պակաս քան պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օր՝ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության, այն է՝. «կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվեն ապրանքների և ծառայությունների դեպքում առնվազն 20, իսկ աշխատանքների դեպքում՝ առնվազն 45 օրացուցային օր: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում: Սույն պարբերությունը չի կիրառվում փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով իրականացվող շինարարական աշխատանքների կամ մեկ անձից գնման ձևի կիրառման դեպքերում»: Հաշվի առնելով նշված

հանգամանքները և հաշվի առնելով այն, որ պայմանագրով սահմանված 20 օրացուցային օրը լրացել է 2018 թվականի հոկտեմբերի 1-ին ապա պայմանագրի 1-ին փուլի մատակարարումները, որոնք նախատեսվել են 3-րդ եռամսյակում՝ պայմանագրի կողմերից անկախ հանգամանքներից տեղափոխվել են 4-րդ եռամսյակ, որի ընթացքում մինչև պայմանագրով սահմանված ժամկետը Ընկերության կողմից մատակարարվել է 13125 կիլոգրամ A4 ֆորմատի թուղթ, իսկ մնացորդ քանակի մատակարարումը 19.12.2018թ.-ին կնքված համաձայնագրով՝ սահմանվել է 2019 թվականի հունվարի 17-ը, ինչը և կատարվել է մատակարարի կողմից:

Ինչ վերաբերվում է 2018 թվականին A4 ֆորմատի թուղթ ձեռք բերելուն ապա Ծառայությունը հաշվի առնելով 2017 թվականի ընթացքում կատարողական վարույթների աննախադեպ աճը, ի նկատի ունենալով այն հանագամանքը, որ 2018 թվականի արտաբյուջետային միջոցների ծախսման նախահաշիվը կհաստատվի 1-ին եռամսյակի ընթացքում դեռևս 2017 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին բյուջետային հայտի կազման ընթացքում նախատեսել է ապրանքի գնումը, որը կօգտագործվեր մինչև 2019 թվականի 1-ին եռամսյակի ավարտը: Նշված ապրանքի գնումը և օգտագործումը ցույց տվեց իր արդյունավետությունը, քանի որ 2019 թվականի ընթացքում Ծառայությունը թե բյուջետային և թե արտաբյուջետային միջոցների հաշվի ձեռք չի բերել A4 ֆորմատի թուղթ:

<u>Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված է.</u> Ծառայությունը 2018 թվականին և 2019 թվականի առաջին կիսամյակում հոգեբանական ծառայությունների գնման համար ծախսել է համապատասխանաբար՝ 4,295.0 հազ. դրամ և 1,800.0 հազ. դրամ: Նախորդ վերահսկողության արդյունքում արձանագրվել էր, որ Ծառայությունը չի սահմանել հոգեբանական ծառայության միավորի գին, չի վարել մատուցված հոգեբանական ծառայությունների քանակի հաշվառում և պայմանագրերով վճարումները կատարել է առանց հաշվարկային հիմքի:

2018 թվականի հունիսի 22-ին Ծառայությունը հոգեբանական փորձագիտական, դիագնոստիկ և խորհրդատվական ծառայություններ մատուցելու համար առանց մրցույթ իրականացնելու անհատ ձեռնարկատիրոջ հետ կնքել է պայմանագիր, որով յուրաքանչյուր ծառայության գին է սահմանվել 75.0 հազ. դրամ:

2019 թվականի համար Ծառայությունը հոգեբանական մասնագիտացված ծառայություններ ձեռք բերելու նպատակով հայտարարել է մրցույթ, որի շրջանակներում չորս մասնակիցներից ստացել է հայտեր: Մրցույթի հայտարարության համաձայն՝ գնման առարկա է հանդիսացել ծառայությունում հարուցված վարույթներով երեխաների տեսակցությունների կազմակերպման կամ երեխաների մեկ ծնողից մյուսին հանձնման կատարողական վարույթներով հոգեբանական մասնագիտացված

ծառայությունների մատուցումը: Մասնակիցներից ստացվել են գնային առաջարկներ՝ անհատ ձեռնարկատերը առաջարկել է հոգեբանական մասնագիտացված ծառայությունների մատուցում՝ մեկ փորձաքննության համար (3-5 այց) Երևան քաղաքում 65,000. 0 դրամ, իսկ ՀՀ մարզերում՝ 85,000. 0 դրամ, հոգեբանական կենտրոն Հ/Կ-ն առաջարկել է հոգեբան մասնագետի վճարում յուրաքանչյուր այցելության համար 6,500. 0 դրամ, տրանսպորտային ծախսեր մարզերում (ըստ անհրաժեշտության)՝ 1,000. 0–2,500. 0 դրամ և խորհրդատվության ու անհրաժեշտ մեթոդական ռեսուրսներով ապահովում (հոգեբանական տեխնիկաներ, մեթոդներ և այլն) յուրաքանչյուր մեկ վարույթի համար անկախ այցելությունների թվից՝ 8,000. 0 դրամ, 3-րդ մասնակիցը առաջարկել է 60,000. 0 դրամ յուրաքանչյուր հանդիպման համար, ևս մեկ մասնակից ֆիզիկական անձը գնային առաջարկ չի ներկայացրել: Մրցութային հանձնաժողովը հաղթող է ճանաչել անհատ ձեռնարկատիրոջը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնակիցների կողմից ներկայացված տարաբնույթ հայտերը չեն համապատասխանում հայտարարությունով սահմանված գնման առարկայի բնութագրին և հնարավոր չէր որոշել նվազագույն գնային առաջարկը: Փաստորեն, մրցութային հանձանժողովը հնարավորություն չի ունեցել համեմատել և գնահատել մասնակիցների գնային առաջարկները, սակայն կայացրել է որոշում և հաղթող է ճանաչել նախորդ տարիներին այդ ծառայությունը մատուցած անհատ ձեռնարկատիրոջը:

<u>Հարկադիր կատարումն ապահովող ծառայության բացատրությունը.</u> 2018 թվականին հոգեբանական մասնագիտացված ծառայություններ մատուցելու համար կնքվել է պայմանագիր, առանց մրցույթի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված ծառայությունները առընչվում են Ալիմենտի բռնագանձման կատարողական վարույթներին ու դիտարկվել են, որպես կատարողական գործողությունների կատարման ծախսեր և համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի միջոցների օգտագործման կարգը հաստատելու մասին» № 2275-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 3-րդ պարբերությունը՝ այն է «Ֆոնդի միջոցների հաշվին կատարողական գործողությունների կատարման ծախսերը՝ կապված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման հետ, չեն համարվում պետական կարիքների համար գնումներ» ու նշված ծախսերի համար նախատեսված գումարները հաստատված նախահաշվով ընդգրկվել են «Մասնագիտական ծառայություններ» 4241 տնտեսագիտական դասակարգման հոդվածի տակ՝ որպես գնում չհանդիսացող ծախսեր (ԳՉԾ):

2019 թվականին նշված ծախսերը նույնպես ընդգրկված են եղել նույն հոդվածի տակ, նույն հիմնավորմամբ, սակայն ալիմենտային բնույթի կատարողական վարույթներով տեսակցությունների և

այլ կատարողական գործողությունների ավելացմամբ պայմանավորված ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի հրամանով ստեղծվել է հանձնաժողով, տվյալ ծառայությունները մատուցող կազմակերպությունների ավելի լայն շրջանակ ընդգրկելու նպատակով: Հանձնաժողովի կողմից հաստատվել է հայտարարության տեքստը և հրապարակվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում: Մրցույթին ներկայացված հայտերով անհատ ձեռնարկատերը, որը ներկայացնում էր հոգեբանական կենտրոնը՝ ներկայացրել էր գնային առաջարկ՝ Երևան քաղաքում 65000 դրամ գումարի չափով և ՀՀ բոլոր մարզերում 85000 դրամ գումարի չափով, որը ներառում է 3-5 այցելություն, տրանսպորտային ծախսերը, նախաքննական, քննչական, դատական և այլ պետական և ոչ պետական մարմիններում կազմակերպության աշխատակիցների կողմից կանչով ներկայանալը: Մրցույթի 2-րդ մասնակից Հոգեբանական կենտրոնի կողմից ներկայացվել է գնային առաջարկ՝ յուրաքանչյուր այցելության համար 6500 դրամ գումար, տրանսպորտային ծախս 1000-2500 դրամ գումարի չափով և խորհրդատվություն յուրաքանչյուր 1 վարույթի համար անկախ այցելությունների թվից 8000 դրամ, կազմակերպությունը ներկայացրել է ցանկ, որի մեջ ներարված էին ՀՀ մարզերում կազմակերպության մասնագետները, սակայն բացառությամբ Լոռու մարզի, ինչպես նաև հաշվի առնված չէր այն հանգամանքը, որ ալիմենտային բնույթի վարույթներով հարկ է առաջանում աշխատանք տանել ոչ միայն տվյալ վարույթով անցնող երեխայի, այլ նաև երեխայի ծնողի կամ ծնողների և ընտանիքի այլ անդամների հետ, ինչպես նաև հաշվի չէր առնվել նախաքննական, քննչական, դատական և այլ պետական և ոչ պետական մարմիններում կազմակերպության աշխատակիցների կողմից կանչով ներկայանալը: Նշված պարզաբանումները հանձնաժողովը ստացել է մրցույթի հայտերի բացման նիստում ներկա գտնվող կազմակերպությունների ներկայացուցիչներից և համադրելով դրանք՝ որոշում է կայացրել նախապատվությունը տալ անհատ ձեռնարկատիրոջը: Մրցույթի արդյունքները մրցույթի հայտ ներկայացրած և ոչ մի կազմակերպության կողմից չեն բողոքարկվել, ուստի և պայմանագիրը մեկ տարի ժամկետով կնքվել է անհատ ձեռնարկատիրոջ հետ:

<u>Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված է.</u> Ծառայությունը «ներկայացուցչական ծախսեր» հոդվածով 2018 թվականին ծախսել է 21,631.8 հազ. դրամ, 2019 թվականի առաջին կիսամյակում՝ 1,718.հազ. դրամ:

Ծառայությունը 2018 թվականի մարտի 17-ին Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել է թիվ ԴԱՀԿ-ԷՈԽ/ՄԱԾՁԲ-18/1 ծառայությունների մատուցման գնման պայմանագիր՝ 51,949.4 հազ. դրամ արժեքով: Պայմանագրով նախատեսվել է 2018 թվականի մայիսի 4-ին և 5-ին կազմակերպել հյուրասիրություն և տոնական միջոցառումներ: 2018 թվականի մարտի 28-ին Ծառայությունը պայմանագրի գնի 50%-ը՝ 25,974.7 հազ. դրամ, որպես կանխավճար փոխանցել է

ընկերությանը: Ծառայության կազմավորման 20-ամյա հոբելյանի առթիվ տոնական միջոցառումներ կազմակերպելու նպատակով ստեղծված հանձնաժողովի նիստերի արձանագրությունների համաձայն՝ 2018 թվականի մայիսի 4-ի և 5-ի տոնական միջոցառումներից բացի 2018 թվականի մայիսի 24-ից 26-ը նախատեսվում էր անցկացնել միջազգային գիտաժողով արտասահմանյան պատվիրակությունների մասնակցությամբ: Այնուհետև, հանձնաժողովի որոշմամբ ներքաղաքական իրավիճակով պայմանավորված որոշ միջոցառումներ չեղարկվել են: Դրանով պայմանավորված Ծառայությունը Ընկերության հետ 2018 թվականի մայիսի 7-ին կնքել է համաձայնագիր, ըստ որի Ընկերությունը իրականացրել է ֆիլմի պատրաստում, հրավիրատոմսերի, բեյջերի, պաստառների տպագրություն և 2018 թվականի մայիսի 5-ի հանդիսավոր միջոցառման կազմակերպում՝ ընդհամենը 12,105.9 հազ. դրամ արժեքով: Կանխավճարի մնացած 13,870.0 հազ. դրամը վերադարձվել է Ծառայության արտաբյուջետային հաշվին:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Ծառայությունը Ընկերության հետ պայմանգիրը կնքել է մեկ անձից գնման ընթացակարգով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և ՀՀ կառավարության՝ «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 23-րդ կետի 4-րդ ենթակետի 10-րդ պարբերությունը, որոնք վերաբերվում են արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությանը, իսկ կնքված պայմանագրով Ծառայության աշխատակիցների և գործընկեր կառույցների համար նախատեսված տոնական միջոցառումների և հյուրասիրության կազմակերպումը պետք է իրականացվեր մրցութային եղանակով: Փաստորեն, Ծառայության և ընկերության միջև առանց հիմնավորման կնքվել է մեկ անձից գնման ընթացակարգով պայմանագիր, որով նախատեսվել և, խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-ին մասի պահանջը, առանց կանխավճարի ապահովման Ընկերությանը տրամադրվել է 25,974.7 հազ. դրամ կանխավճար:

Բացի այդ, Ծառայության և Ընկերության միջև կնքված պայմանագրի և համաձայնագրի տեխնիկական բնութագրերում բացակայում են տվյալներ ֆիլմի պատրաստման արժեքի և տևողության, բեյջերի ու պաստառների գնի և քանակի, հանդիսավոր միջոցառման կազմակերպման արժեքի վերաբերյալ և հնարավոր չէ գնահատել գնման ծախսային արդյունավետությունը ու 12,105.9 հազ. դրամ ծախսի հիմնավորվածությունը:

<u>Հարկադիր կատարումն ապահովող ծառայության բացատրությունը.</u> 2018 թվականի արտաբյուջետային միջոցների ծախսման նախահաշիվը կազմելու ժամանակ, ի թիվս ՀՀ կառավարության որոշման նախագծի և հավելվածների՝ Ծառայության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը և ՀՀ կառավարությանը ներկայացվել է արտաբյուջետային միջոցների ծախսերի

հիմնավորումները, որոնց մեջ ներառված է եղել Ներկայացուցչական ծախսեր 4237 տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսված՝ 121,000.0 հազ. ՀՀ դրամ գումար: Հաշվի առնելով այն, որ 2018 թվականի մայիսի 5-ին լրանում էր Ծառայության կազմավորման 20-րդ տարեդարձը, ինչպես նաև մայիս ամսին նախատեսվում էր բազմաթիվ միջոցառումներ՝ կապված նշված տարեդարձի հետ, նախատեսվում էր միջոցառումների մասնակից արտասահմանյան պատվիրակությունների ժամանման, այցելությունների կազմակերպման և գիտաժողովի կազմակերպման նպատակով աշխատանքների, ծառայությունների և ապրանքների ձեռք բերում: Նշված միջոցառումները՝ դեռևս 2017 թվականի նոյեմբեր ամսից ստեղծված աշխատանքային խմբի, այնուհետև հանձնաժողովի կողմից ծրագրավորվել էր անցկացնել, որպես մեկ ընդհանուր միջոցառում՝ չտարանջատելով միջոցառումները, հաշվի առնելով, որ երկու միջոցառումներին հրավիրված են եղել նաև հյուրեր արտասահմանյան թվով 18 երկրներից: Վերը նշված հիմնավորումները դրական գնահատական են ստացել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից: Մինչև ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 15-ի թիվ 136-Ն որոշման ընդունումը միջոցառումների անցկացման հանձնաժողովի կողմից բանակցություններ են տարվել տվյալ ոլորտում առաջատար տարբեր ընկերությունների հետ, որի արդյունքում որոշվել է նախապատվությունը տալ այդ ընկերությանը, որը առաջարկել է նվազագույն գնային առաջարկ: Նշված ընկերության հետ 17. 03. 2018թ. -ին կնքվել է թիվ ԴԱՀԿ-ԷՈՒ/ՄԱԾՁԲ-18/1 գնման պայմանագիրը, որը սահմանված կարգով 22. 03. 2018թ. -ին հաշվառվել է (ստացել է դրական եզրակացություն) լիազոր մարմնի՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, առանց որևէ դիտողության կամ առարկության:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №2

ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահավող ծառայության բյուջետային մուտքերի ապահովման վերաբերյալ

<u>Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված է.</u> «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով ավարտված կատարողական վարույթները 2018թ. հարուցվել են 102.219 ֆիզիկական անձանց նկատմամբ: Հաշվեքննությամբ պարզվել է, որ այդ անձանցից 114 անձանց նկատմամբ 2018թ. ընթացքում հարուցվել և օրենքի այդ հոդվածի հիմքով ավարտվել է 100-ից ավել կատարողական վարույթներ: Փաստորեն, այդ անձինք չունենալով գույք կամ եկամուտ, փաստացի շահագործել են ավտոմեքենա և կատարել են բազմաթիվ խախտումներ, որի համար նրանց նկատմամբ 2018թ.-ին հարուցվել և ավարտվել 158.735,8 Հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով 19.275 վարույթներ:

Ստուգմամբ պարզվել է նաև, որ առանձին դեպքերում իրավաբանական անձանց պատկանող ավտոմեքենաների վրա արձանագրված բազմաթիվ խախտումների համար նշանակվել են տուգանքներ գույք կամ եկամուտ չունեցող ֆիզիկական անձանց նկատմամբ: Այսպես 2018թ և 2019թ առաջին կիսամյանկում տաքսի ծառայություն մատուցող փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող ավտոմեքենաներով խախտումների համար 2.753 վարչական ակտերով նշանակված 21.447,0 հազ. դրամ տուգանքները արձանագրվել են 3 ֆիզիկական անձի նկատմամբ, համապատասխանաբար՝ 10.843,5 Հազ. դրամ 8.160,0 հազ. դրամ և 2.443,5 Հազ. դրամ:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող ավտոմեքենաների 339 վարչական ակտերով 2.037,0 Հազ. դրամ տուգանքները արձանագրվել են գույք կամ եկամուտ չունեցող մեկ ֆիզիկական անձի նկատմամբ:

<u>Հարկադիր կատարումն ապահովող ծառայության բացատրությունը.</u> 2018 և 2019թթ. ընթացքում հարուցվել են բազմաթիվ կատարողական վարույթներ, որոնք հարուցվել են նույն պարտապանների նկատմամբ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նշված անձանց վերաբերյալ հարուցված կատարողական վարույթներով հարկադիր կատարողների կողմից ձեռնարկվել են կատարողական գործողություններ՝ կիրառվել են արգելանքներ, հարուցված կատարողական վարույթներով պահանջների կատարումն ապահովելու ուղղությամբ: Նշված կատարողական վարույթները կատարողական գործողությունների արդյունքում ավարտվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41 հոդվածի 1-ին մասի տարբեր կետերով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի դեպքում չի հայտնաբերվել գույք կամ դրամական միջոց, որի վրա կարելի է բռնագանձում տարածել, մյուս դեպքում անհնար է եղել պարզել պարտապանի կամ նրա գույքի գտնվելու վայրը, որոնց նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Իսկ տրանսպորտային միջոները, որոնցով կատարվել են իրավախախտումները գրեթե բոլոր դեպքերում հաշվառված են այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց անվամբ: Նշված դեպքերում արգելանքի կիրառում տվյալ տրանսպորտային միջոցի վրա օրենքով չի նախատեսվում: Համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը սույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է և կատարողական մակագրության թերթը, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը, ուստի կատարողական վարույթ հարուցվում և հարկադիր կատարման միջոցներ են կիրառվում այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ, ում նկատմամբ կայացվել է վարչական վարչական ակտ: Իրականացվող կատարողական գործողությունները ամբողջապես

իրականացվում են տվյալ պարտապանի գույքի և դրամական միջոցների հայտնաբերման, հետագայում իրացման ուղղությամբ:

<u>Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված է.</u> Ստուգմամբ պարզվել է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «կատարողական թերթով բռնագանձումն առաջին հերթին տարածվում է պարտապանի դրամական միջոցների վրա: Եթե պահանջատիրոջ պահանջները բավարարելու համար չկան անհրաժեշտ դրամական միջոցներ, ապա բռնագանձումը տարածվում է պարտապանին պատկանող այլ գույքի վրա, բացառությամբ այն գույքի, որի վրա օրենքով չի թույլատրվում բռնագանձում տարածել»: Պարզվել է, որ 2018թ. և 2019թ. առաջին կիսամյակում մեկ ֆիզիկական անձի նկատմամբ հարուցված 8.739.3 հազ. դրամի 1.100 կատարողական վարույթներ ավարտվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով այն դեպքում, երբ ըստ Ճանապարհային ոստիկանության կողմից ներկայացված տեղեկանքների, այդ ֆիզիկական անձը ունեցել է սեփականության իրավունքով իրեն պատկանող 11 ավտոմեքենա, որոնցից ոչ մեկի վրա հարկադիր կատարողները բռնագանձում չեն տարածել: Պարզվել է նաև, որ 2018 թվականին հարուցված և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով ավարտված 64.006,0 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով 7.205 վարույթներով 100-ից ավել խախտում կատարած 34 պարտապան ֆիզիկական անձինք ևս ունեցել են մեկ կամ ավելի սեփականության իրավունքով իրենց պատկանող ավտոմեքենաներ, սակայն հարկադիր կատարողները պարտապանների ավտոմեքենաների վրա բռնագանձում չեն տարածել:

<u>Հարկադիր կատարումն ապահովող ծառայության բացատրությունը.</u> Սույն հարցի վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ պարտապանների անվամբ հաշվառված ավտոմեքենաների վրա արգելանքները կիրառված են և բոլոր այն դեպքերում, երբ նշված ավտոմեքենաները չեն հայտնաբերվել, դրանց նկատմամբ հարկադիր կատարողի որոշմամբ հայտարարվել է հետախուզում: Նշված ավտոմեքենաները հայտնաբերվելու դեպքում բռնագանձում կտարածվի օրենքով սահմանված կարգով: Ինչ վերաբերվում է 2018թ և 2019թ առաջին կիսամյակում Ծառայության վարչական ակտերով բռնագանձումների բաժնում ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանություն ծառայության կողմից կայացված թվով 1.100 վարչական ակտերի հիման վրա ֆիզիկական անձից գումար բռնագանձելու վերաբերյալ հարուցված կատարողական վարույթներով իրականացված կատարողական գործողություններին, հարկ է նշել, որ վերջինիս պատկանող թվով 11 տրանսպորտային միջոցների նկատմամբ կիրառվել են արգելանքներ և դրանք հայտնաբերելու

նպատակով հայտարարվել է հետախուզում, որոնք հայտնաբերվելու դեպքում կիրացվեն օրենքով սահմանված կարգով:

<u>Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված է.</u> Ստուգմամբ պարզվել է, որ 2018 թվականին և 2019թ առաջին կիսամյակում Ճանապարհային ոստիկանության պահանջով հարուցված համապատասխանաբար՝ 5.186,0 հազ. դրամի 465 կատարողական վարույթներ և 2.552,0 հազ. դրամի 194 կատարողական վարույթներ հարկադիր կատարողների որոշումներով ավարտվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Կատարողական վարույթն ավարտելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում» հիմքով: Փաստորեն, հարկադիր կատարողները հղում են կատարել որոշում կայացնելու իրենց վերապահված իրավասությանը, սակայն որոշումներում բացակայում է վարույթն ավարտելու հիմքը, և կայացված այդ որոշումները հիմնավորված չեն:

<u>Հարկադիր կատարումն ապահովող ծառայության բացատրությունը.</u> Հարկադիր կատարումն ապահովող ծառայության վարչական ակտերով բռնագանձումների բաժնում ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից կայացված մի շարք վարչական ակտերի հիման վրա հարուցված կատարողական վարույթներով պարտապանների կողմից ներկայացված համապատասխան հիմքերով վերացվել են, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով սահմանված դրամական միջոցների նկատմամբ կիրառված արգելանքները և նշված վարույթները ավարտվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով՝ քաղաքացիներին անհարմարություն չպատճառելու և նշված կատարողական վարույթները նույն պարտապանների վերաբերյալ հարուցվող նոր կատարողական վարույթներից տարբերակելու համար:

<u>Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված է.</u> Ստուգմամբ պարզվել է, որ 2019 թվականի 1-ին կիսամյակում հարուցված վարույթներով բռնագանձման ցուցանիշը արժանահավատ չէ: Այսպես, ՊԵԿ պահանջով Պետական ոչ առևտրային կազմակերպությունից 736.567,6 հազ. դրամ բռնագանձելու համար Ծառայության կողմից հարուցված թիվ 05064006 կատարողական վարույթի շրջանակում ՊԵԿ-ը 2019թ. մայիսի 27-ի գրությամբ տեղեկացրել է Ծառայությանը, որ ՊՈԱԿ-ը չկատարված հարկային պարտավորություններ չունի: Սակայն, հարկադիր կատարողը կազմել է բռնագանձված գումարների բաշխման մասին տեղեկանք, և 736.567,6 հազ. դրամը արտացոլվել է Ծառայության էլեկտրոնային շտեմարանում, որպես բռնագանձված գումար: Փաստորեն, Ծառայության էլեկտրոնային շտեմարանում, այդ գումարի չափով առկա է անճշտություն:

<u>Հարկադիր կատարումն ապահովող ծառայության բացատրությունը.</u> Ծառայության պետական եկամուտների կոմիտեի օգտին, դատախազության հայցերով և քրեական գործերով բռնագանձումների բաժնում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 15.11.2018թ. կայացված թիվ 3001199 որոշման համաձայն հարուցվել է կատարողական վարույթ Պետական ոչ առևտրային կազմակերպությունից ՀՀ պետական բյուջեի օգտին 736.567.6 հազ. դրամ գումար բռնագանձելու վերաբերյալ:

Նշված կատարողական վարույթով 03.06.2019թ. Ծառայություն է ներկայացվել ՊԵԿ-ի 27.05.2019թ. թիվ 11-4/23969-19 գրությունը՝ առ այն, որ պարտապանը պարտավորություններ չունի:

Նշվածի հիման վրա կատարողական վարույթների էլեկտրոնային շտեմարանում վճարման աղբյուր է գրանցվել որպես ուղիղ մարումով գանձված գումար:

<u>Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված է.</u> Ստուգմամբ պարզվել է, որ 2018թ. և 2019թ. առաջին կիսամյակում ՊԵԿ պահանջով հարուցված համապատասխանաբար՝ 36.607.1 հազ. Դրամի 51 կատարողական վարույթներ և 428.2 հազ. Դրամի 3 կատարողական վարույթներ հարկադիր կատարողների որոշումներով ավարտվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Կատարողական վարույթն ավարտելու մասին հարկադիր կատարողը կայացնում է որոշում» հիմքով: Փաստորեն, հարկադիր կատարողները հղում են կատարել որոշում կայացնելու իրենց վերապահված իրավասությանը, սակայն որոշումներում բացակայում է վարույթն ավարտելու հիմքը, և կայացված այդ որոշումները հիմնավորված չեն:

<u>Հարկադիր կատարումն ապահովող ծառայության բացատրությունը.</u> Ծառայության պետական եկամուտների կոմիտեի օգտին, դատախազության հայցերով և քրեական գործերով բռնագանձումների բաժնում թվով 32 կատարողական վարույթներով կատարողական գործողությունների իրականացման ընթացքում պարզվել է, որ անբողոքարկելի վարչական ակտի կատարման վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին չեն համապատասխանում: Նշվածի հիման վրա Ծառայության պետական եկամուտների կոմիտեի օգտին, դատախազության հայցերով և քրեական գործերով բռնագանձումների բաժնի պետի կողմից կայացվել է ««Կատարողական վարույթը հարուցելու մասին» որոշումը վերադասության կարգով վերացնելու մասին» որոշումներ: Քանի որ նշված վարույթները մուտքագրվել են Ծառայության վարույթների վարման էլեկտրոնային շտեմարան, իսկ վերջիններս ներկա գործիքակազմի առկայության պարագայում հնարավոր չեն հեռացման, ուստի կատարողական վարույթները ավարվել են վարույթների վարման էլեկտրոնային շտեմարանում նշելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասը՝ վերջիններս տարբերակելու նպատակով: Իսկ մնացած 22 կատարողական վարույթները վերսկսվել են օրենքով

սահմանված կատարողական գործողություններ իրականացնելու նպատակով, իսկ կատարողական վարույթները հետագայում ավարտվել կամ կարճվել են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ և 42-րդ հոդվածների տարբեր հիմքերով:

Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված է. Ստուգմամբ պարզվել է, որ մասնավորապես ՊԵԿ պահանջով իրավաբանական անձից 22.03.2017թ. կատարողական վարույթով ենթակա է բռնագանձել 15.655.0 հազ. դրամ: 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ ընկերությունը հաշվապահական հաշվեկշռում ունեցել է 107.612.2 հազ. Դրամի հիմնական միջոցներ, այդ թվում՝ երեք ավտոմեքենա և երկու բուլդոզեր: Վարույթում առկա է պայմանագիր, ըստ որի այդ տրանսպորտային միջոցները հանդիսանում են գրավի առարկա: Գրավի պայմանագիրը չունի նոտարական վավերացում, կամ պայմանագիրը անվավեր է: Վարույթում առկա Ճանապարհային ոստիկանության տեղեկանքի համաձայն այդ տրանսպորտային միջոցների վրա սահմանափակումներ կիրառված չեն: Հարկադիր կատարողը չի այցելել ընկերության հաշվառման հասցե, չի հայտնաբերել ընկերության հիմնական միջոցները, սակայն նշանակել է փորձաքննություն հիմնական միջոցների գնահատման համար: Հարկադիր կատարողը հայտարարել է ընկերության տնօրենի և հաշվապահի նկատմամբ հետախուզում, իսկ ընկերության գույքի նկատմամբ հետախուզում չի հայտարարվել և 27.12.2017թ. վարույթը ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2.1-րդ կետի հիմքով՝ անհնարին է պարզել պարտապանի գույքի գտնվելու վայրը: Հարկադիր կատարողի որոշմամբ 2019թ. նոյեմբերի 19-ին բռնագանձվել է բանկում արգելադրված ընկերությանը պատկանող 5.2 հազ. դրամը: Փաստորեն, հարկադիր կատարողը ընկերության գույքի հայտնաբերման ուղղությամբ կատարողական գործողությունները պատշաճ չի կատարել, որի արդյունքում ընկերությունից բռնագանձման ենթակա 15.655.0 հազ. դրամ գումարից պետական բյուջե մուտք է եղել 5.2 հազ. դրամ:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության բացատրությունը. Ծառայության պետական եկամուտների կոմիտեի օգտին, դատախազության հայցերով և քրեական գործերով բռնագանձումների բաժնում նշված կատարողական վարույթով իրականացված կատարողական գործողությունների ընթացքում 27.06.2017թ. հարկադիր կատարողը այցելել է պարտապան ընկերության հասցե և արգելանք է դրել Ընկերությանը պատկանող թվով 3 ավտոմեքենաների և շարժական գույքերի վրա, որոնք ի պահ են հանձնվել ընկերության հաշվապահին: Դրանց գնահատման համար 03.07.2017թ. որոշմամբ նշանակվել է փորձագետ:

Արգելանք է դրվել ընկերության դրամարկղի ելքային մասի վրա, որի վերաբերյալ դրամարկղային գրքում կատարվել է համապատասխան գրառում:

Թվով 2 բուլդոզերների վրա արգելանք դնելու վերաբերյալ համապատասխան գրություն է ուղարկվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսական տեխնիկայի տեսչություն:

Կատարողական գործողությունների ընթացքում պարտապան ընկերության տնօրենին և հաշվապահին հայտնաբերելու նպատակով հայտարարվել է հետախուզում: Ինչ վերաբերվում է պարտապան ընկերությանը պատկանող նշված տրանսպորտային միջոցներին, ապա վերջիններիս նկատմամբ ևս հայտարարվել է հետախուզում՝ Ծառայությունում տվյալ պարտապանի վերաբերյալ հարուցված այլ կատարողական վարույթի շրջանակներում:

Ներկայումս նշված կատարողական վարույթը 19.03.2020թ.–ից կասեցվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով, քանի որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 08.01.2019թ. որոշմամբ վարույթ է ընդունվել ՀՀ ՊԵԿ-ի դիմումը՝ պարտապանին սնանկ ճանաչելու պահանջի մասին:

<u>Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված է.</u> Ստուգմամբ պարզվել է, որ մասնավորապես ՊԵԿ պահանջով իրավաբանական անձից 22.02.2019թ. թիվ 04961897 կատարողական վարույթով ենթակա է բռնագանձել 38.862.6 հազ. դրամ: Ըստ հարկադիր կատարողի կողմից կատարված հարցումների՝ ընկերությունը 2017 թվականի տարեվերջին ունեցել է 496.760.1 հազ. դրամի ակտիվներ, այդ թվում՝ 51.892.8 դրամի հիմնական միջոցներ, 10.601.0 հազ. դրամի հումք, 172.352.6 հազ. դրամի անավարտ արտադրանք, 259.849.7 հազ դրամի դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ: Վարույթի հարուցման պահին ընկերության կարգավիճակը եղեկ է գործող: Հարկադիր կատարողը չի այցելել ընկերության առաքման տեղափոխման վայր, հայտարարել է տնօրենի նկատմամբ հետախուզում: Գույքի նկատմամբ հարկադիր կատարողը հետախուզում չի հայտարարել, սակայն 26.06.2019թ. ավարտել է վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2.1-րդ կետի հիմքով՝ անհնարին է պարզել պարտապանի գույքի գտնվելու վայրը: Փաստորեն, հարկադիր կատարողը չի իրականացրել կատարողական գործողություններ ընկերության ակտիվները հայտնաբերելու ուղղությամբ, որի արդյունքում 38.862.6 հազ. դրամից պետական բյուջե գումար մուտք չի եղել:

<u>Հարկադիր կատարումն ապահովող ծառայության բացատրությունը.</u> Ծառայության պետական եկամուտների կոմիտեի օգտին, դատախազության հայցերով և քրեական գործերով բռնագանձումների բաժնում նշված կատարողական վարույթով ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված 2019թ հաշվետվության համաձայն՝ պարտապանի ակտիվները, այդ թվում հիմնական միջոցները, հումքը, անավարտ արտադրանքը դեբիտորական պարտքերը և այլ ակտիվները եղել են զրոյական: Կատարողական

վարույթով կատարված հարցումների արդյունքում պարտապանին պատկանող գույք և դրամական միջոցներ չեն հայտնաբերվել, որի վրա կարելի է բռնագանձում տարածել:

Կատարողական գործողությունների ընթացքում անհնարին է եղել պարզել պարտապան ՍՊԸ-ի տնօրենի գտնվելու վայրը, որին հայտնաբերելու նպատակով հայտարարվել է հետախուզում:

03.03.2020թ. թիվ 04961897 կատարողական վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-մասի 8-րդ կետի համաձայն կարճվել է:

<u>Հաշվեքննիչ պալատի կողմից արձանագրված է.</u> Ստուգմամբ պարզվել է, որ մասնավորապես ՊԵԿ պահանջով իրավաբանական անձից 01.03.2018թ. թիվ 04045271 կատարողական վարույթով ենթակա է բռնագանձել 99.344.7 հազ. դրամ: Վարույթում բացակայում է ընկերության հաշվապահական հաշվեկշիռը, առկա է միայն 2016թ. երկրորդ կիսամյակի ԱԱՀ հաշվարկի հաշվետվությունը, ըստ որի ընկերությունը այդ ժամանակահատվածում ստացել է 194.984.6 հազ. դրամի հասույթ: Հարկադիր կատարողը չի այցելել ընկերության գործունեության հասցե և 25.07.2019թ. ավարտել է վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41 հոդվածի 1-ին մասի 2.1-րդ կետի հիմքով՝ անհնարին է պարզել պարտապանի գույքի գտնվելու վայրը: Փաստորեն, հարկադիր կատարողը գույքը հայտնաբերելու ուղղությամբ կատարողական գործողությունները պատշաճ չի կատարել, որի արդյունքում 99.344.7 հազ. դրամից պետական բյուջե գումար մուտք չի եղել:

<u>Հարկադիր կատարումն ապահովող ծառայության բացատրությունը.</u> Ծառայության պետական եկամուտների կոմիտեի օգտին, դատախազության հայցերով և քրեական գործերով բռնագանձումների բաժնում նշված կատարողական վարույթով կատարված հարցումների արդյունքում պարտապան Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող գույք և դրամական միջոցներ չեն հայտնաբերվել:

02.03.2018թ.-ին ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչություն կատարված հարցումով պահանջվել է ներկայացնել պարտապանի վերջին ներկայացված հաշվետվությունը, որին 21.03.2018թ.-ին տրամադրել է 2016թ. հաշվետվությունը:

17.03.2018թ. Ծառայություն է մուտք եղել ՀՀ ՊԵԿ-ի թիվ 70-9/13286-18 գրությունը, որի համաձայն պարտապանի գործունեությունը 21.05.2012թ-ից դադարեցվել է:

Կատարողական գործողությունների ընթացքում պարտապան Ընկերության հիմնադիրը չի հայտնաբերվել և նրա նկատմամբ հայտարավել է հետախուզում, իսկ կատարողական վարույթը 25.07.2018թ-ին ավարտվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41 հոդվածի 1-ին մասի 2.1 կետի հիմքով:

Հավելված 1

ՊԵԿ պահանջով 2018 թվականին հարուցված կատարողական վարույթները
2020 թվականի փետրվարի 26-ի դրությամբ

հազ. դրամ

Հոդված	Վարույթ (հատ)	Բռնագանձման գումար	Կատարողական ծախս	Մնացորդ
Ընթացիկ վարույթներ	33	30,330.9	1,469.4	28,353.8
Կասեցված վարույթներ	34	75,332.9	3,646.5	67,245.4
41.1.1	55	32,496.0	1,703.4	31,888.3
41.1.2	527	437,505.6	22,056.5	452,652.1
41.1.2.1	3497	1,385,546.0	69,803.1	1,383,276.8
41.1.3	30833	619,776.1	64,296.1	642,153.4
41.1.4	814	105,087.9	6,097.6	62,864.8
41.1.4.1	287	210,897.2	10,506.5	185,787.9
41.1.5	53	101.5	10.8	133,147.4
41.1.5.1	2	19,525.4	976.3	20,501.7
41.1.7	88	133,802.5	6,808.7	138,414.8
41.2	53	36,607.1	1,867.5	35,369.8
42.1.1	30393	1,917,732.1	112,326.9	30,867.3
42.1.2	4231	198,088.3	17,746.1	177,853.4
42.1.3	8	1,548.9	87.1	1,613.8
42.1.4	24	614.6	74.4	689.0
42.1.6	10	381,871.2	19,113.1	396,959.6
42.1.8	852	1,507,565.1	74,873.6	1,593,862.9
42.1.9	3	1,688.0	84.4	1,772.4
42.1.10	7	175.4	13.5	2,382.1
42.1.11	117	74,829.3	3,604.3	8,619.9
42.1.12	19	34,935.5	1,736.0	35,456.7
42.1.13	242	563,302.0	26,599.6	546,961.5
42.1.14	3	79,900.2	3,999.0	83,874.2
Ընդամենը	72185	7,849,259.5	449,500.2	6,062,568.7

Հավելված 2

ՊԵԿ պահանջով 2019 թվականի առաջին կիսամյակում հարուցված կատարողական վարույթները 2020 թվականի փետրվարի 26-ի դրությամբ

հազ. դրամ

Հոդված	Վարույթ (հատ)	Բռնագանձման գումար	Կատարողական ծախս	Մնացորդ
Ընթացիկ վարույթներ	222	265,445.3	12,920.1	155,261.1
Կասեցված վարույթներ	77	327,661.4	15,468.3	250,724.8
41.1.1	17	7,659.1	396.5	6,146.9
41.1.2	592	415,509.1	20,925.1	432,226.3
41.1.2.1	1957	1,239,957.1	62,469.7	1,247,312.0
41.1.3	7983	435,220.6	33,543.8	432,401.9
41.1.4	340	834,685.1	42,043.6	64,648.5
41.1.4.1	184	179,411.8	8,984.2	176,535.1
41.1.5	22	521.9	26.8	22,494.7
41.1.5.1	6	1,039,554.4	51,977.7	1,079,816.8
41.1.7	59	18,912.5	979.6	18,027.1
41.2	3	428.2	25.5	453.6
42.1.1	10207	2,375,601.5	127,519.3	21,345.1
42.1.2	924	176,470.5	7,210.4	79,519.9
42.1.4	13	2,947.2	159.1	3,037.2
42.1.8	530	2,284,213.4	113,448.6	2,371,826.7
42.1.9	2	2,613.2	132.7	2,745.9
42.1.11	301	49,309.1	3,070.9	21,341.0
42.1.12	11	37,388.5	1,880.2	39,267.5
42.1.14	1	15,942.3	797.1	16,739.4
Ընդամենը	23451	9,709,452.3	503,979.2	6,441,871.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

2020 թվականի մարտի 30-ի N 47-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հաշվեքննիչ պալատի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ իրականացված հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ